**Համաձայնագիր-1**
**05.09.2016թ. կնքված N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/8-2 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «     » սեպտեմբերի 2016թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Պետրոսյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.09.2016թ. կնքված ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/8-2 գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 9.4 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված մատակարարման ժամկետը երկարաձգել, այն սահմանելով մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը :

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13 շ., բն. 30 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյան մ/ճ |
| Հ/Հ 900013202016, 900013574018, 900011006575 | Հ/Հ 163028030332 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 01254973 |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ | «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| **Գ. Պետրոսյան** | **Կ.Հարությունյան** |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |